



ՄԻԱՍԻՆ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԿՈՏՐԵԼ ԲՈՒՈՒԹՅԱՆ ՇՂԹԱՆԵՐԸ

Բռնություն է ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնի արարքը, անտեսումը կամ հետամտումը, որը կատարվել է ընտանիքի անդամների, զուգընկերների կամ նախկին զուգընկերների միջև:

Հաշմանդամություն ունեցող կինը կամ աղջիկը կարող է բռնության ենթարկվել տարբեր մարդկանց կողմից, օրինակ՝ ընտանիքի անդամի, ամուսնու, ընկերոջ, գործընկերոջ, անձնական օգնականի, գործատուի, անձանոթ մարդու և այլոց:

Եթե կինը լռում է, դառնում է ավելի խոցելի և մեկուսացված:

Դիմի՛ր օգնության

- Ոստիկանություն՝ 1-02
- ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 114
- Նախարարության կողմից պատվիրակված աջակցության կենտրոնի ծառայություններ մատուցող հասարակական կազմակերպությունների թե՛ գծի հեռախոսահամարները



- Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն +374 77 99 12 80
- Ներբեռնեք Safe YOU հավելվածը
- Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա +374 41 43 37 43
- «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ +374 99 887 808
- «Լայթհաուս» բարեգործական հիմնադրամ Անվճար թե՛ գիծ ՄՏՍ-ի բաժանորդների համար՝ 2080
- Հաշմանդամություն ունեցող կանայք կարող են դիմել «Ագաթ» ՀԿ



ք. Գյումրի, Չամբուլի 8/5



+374 77 043 042



info@agatengo.org



ԴՈՒ ԿԱՐՈՂ ԵՍ ՏՆՏԵՍԱՊԵՍ ԱՆԿԱՆ ԼԻՆԵԼ

Տնտեսական բռնություն է, երբ կնոջը կախվածության մեջ են գցում իրենցից ու զրկում են սննդից, հագուստից, դեղորայքից կամ մյուս ապրանքներից:

Երբ կնոջն արգելում են ծախսել իր գումարն այնպես, ինչպես ինքն է ցանկանում:

Տնտեսական բռնություն է նաև, երբ կնոջից վերցնում են իր կենսաթոշակը կամ աշխատավարձը:

ԹՈՇԱԿՍ ԵՍ ԵՍ ՏՆՕՐԻՆԵԼՈՒ



## ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԳԱՂՏՆԻՓ ՉԷ

Ֆիզիկական բռնություն է ծեծը, առողջությանը վնաս պատճառելը, ազատությունից զրկելը, ցավ պատճառելը:

Ֆիզիկական բռնություն է նաև, երբ այրում են մաշկը կամ մազերը, հրում են, կծում, տարբեր առարկաներ օգտագործում, որոնք կարող են ցավ պատճառել:

Ֆիզիկական բռնություն է, երբ խնամողը դիտմամբ կոտրում է աջակցող սարքը, օրինակ՝ լսողական ապարատը, սայլակը, քայլակը և այլն:

Միտումնավոր տեղաշարժում է տան կահույքը, որպեսզի դժվար լինի ֆիզիկական խնդիրներ ունեցող կնոջը տեղաշարժել:

Ստիպողաբար կամ ֆիզիկական ուժով դեղորայք են ներարկում կամ դեղահաբ տալիս, երբ դրա կարիքը չկա:

## Հոգեբանական բռնությունն ԱՆՏԵԱՆԵԼԻ ՉԷ՝

Հոգեբանական բռնության դեպքում մարդիկ փորձում են վախ առաջացնել, նվաստացնել, մեկուսացնել:

Հոգեբանական բռնություն է, երբ կնոջ կյանքը փորձում են վերահսկել և թույլ չեն տալիս շփվել այլ մարդկանց հետ:

Երբ ասում են, որ նրանք բռն են և արժանի չեն ապրելու:

### Անտեսումը բռնությունն է

Անտեսման դեպքում ծնողները դիտավորյալ զրկում են իրենց երեխաներին ամենօրյա սննդից, հագուստից, բուժումից: Անտեսում է, երբ հաշմանդամություն ունեցող կնոջը երկար ժամանակ անկողնում պառկած են թողնում: Նաև, երբ խնամողը չի օգնում զուգարան գնալիս:



### Մեկուսացում

Որոշ մարդիկ ամաչում են հաշմանդամություն ունեցող կին կամ աղջիկ ունենալ իրենց ընտանիքում: Նրանք կարող են մարդկանցից թաքցնել: Հաճախ հաշմանդամություն ունեցող աղջիկներին թույլ չեն տալիս գնալ դպրոց, իջնել բակ և այլն:



Հաշմանդամություն չի նշանակում հասանելիություն՝ իմ մարմնին

### Սեռական բռնությունն է՝

Երբ առանց կնոջ համաձայնության դիպչում են նրա կրծքերին, սեռական օրգաններին կամ մարմնի այլ մասերին:

Երբ խնամող անձն օգնում է կնոջը՝ փոխարենը ստիպելով սեռական հարաբերություն ունենալ:

Երբ կնոջ կամքին հակառակ ստուգում են՝ կո՞ւյս է նա թե՞ ոչ:

Երբ պարտադրում են նկարվել Էրոտիկ տեսանյութում՝ դրա դիմաց խոստանալով գումար կամ սնունդ տալ:

Երբ պարտադրում են դիտել Էրոտիկ ֆիլմեր: